


ԲԱՃԵՆԳԻՆ  
 Մ. ՆԱԶԱՆԳԱՅ ՀԱՄԱՐ  
 Տարեկան \$1.50  
 Կեցամսեայ 0.85  
 ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան 10 Ֆրանք  
 ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Խմբագրութեան գրիումած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՍԷՆԹ:



# Հայրենեաց

ՇԱՄԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻԱՅԻՆ  
 AN ARMENIAN WEEKLY.  
 16 MECHANIC STREET,  
 WORCESTER, MASS.

ՀԱՍՏԻ  
 AMERICAN HAI PUBLISHING Co  
 P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second-Class Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԿՐՈՆԸ ԵՒ ԻՒՐ ԴԵՐԸ

Ձայն Հայրենեացի մէջ «Միանանք որ ապրինք» խորագրով շարք մը յօդուածներ կրատարակուեցան որոց դէմ ստացած ենք միայն երկու անձանց կողմանէ գրուած պատասխաններ, սակայն նկատելի է որ պատասխանողները մի քանի կե' տերու մէջ յօդուածագրին միտքը սխալ ըմբռնած են. նկատելով նաև որ նոյն իւրի միայ մեր ընկիւղ տեսութիւնները անոնց գոհացում պիտի տան. զա' նոնք պիտի չ'հրատարակենք: Թէև փա' փաքելի էր որ խնամով ուսումնասիրու' ած պատասխաններ արուէին ու մենք հարտարակէինք:

Որպէս զի մեր ներկայիւք տեսութիւնները լիակողմանի օգտակարութիւն մը ունենան, մենք ամբողջ կրօնը պիտի առնենք և անոր իբր մէկ մասը Պրն. Մերոնեանի յարուցած խնդիրները ու յայտնեք մեր հայեացքները:

Ամէն ինչ բան որ ժողովուրդներու կեանքին վրայ վճռական ազդեցութիւն ունի, պէտք է որ հրապարակագրութեան նիւթ դառնայ. որովհետև կրօնը մարդկութեան հետ ծներ, անոր անբաժան կենակիցը եղեր, անոր բախար «որոշեր ու ճակատագիրը կըքեր է. որովհետև անով ազգեր ելեր ու ազգեր ինկեր են, որովհետև նա մարդկութեան ինչպէս յառաջդիմութեանը նոյնպէս և հետագի' մութեանը պատճառ եղեր է. անկէ (անոր անունովը) ծներ են մարդկութեան թէ գերագոյն բարիքները և թէ ստորնազոյն չարիքները. ահա այս նկատումները կը պարտաւորեն մեզ կրօնին և անոր դերին վրայ սեռեւեղ մեր խորին ուշադրութիւնը:

Ամենակենսական ու նախնական հարցը որ մեր առջև կելլէ, այս նիւթին ձեռնարկելու պահուս, է թէ. Ինչ է կր' ՐՈՆԸ: Հարցում մը որ իբր Գորգեան հանկոյցներուն մէջ անլուծելի կը պահէ Վերկիի խոսքովը թիւնը ու մարդուն հաստութիւնը: Ազատութիւնը և Բարիկեցուցութիւնը: Մարդկութիւնը միշտ հետամուտ եղած է այս հարցը պարզաբանելու և շարունակ զայն առեղծուածներով սքողած է: Մովսէս Սինաէն իր ժամանակին կրօններու ամենէն լուսաւորը կը բերէ Իսրայէլի ժողովուրդին. որը իր իսկական դերը կատարելէ կը վրիպի:

Թիսուս կուգայ, Մովսիսի համար կը պատասխանէ. «Անիկա մեր սրտերուն խտտութեանը համար այդպէս ըսաւ»: և ինքը Գողգոթայէն խաչին խորհրդովը կը խօսի, կրկին զինքը չեն հասկնար. ուստի կըսէ, «Ես կերթամ և Հոգին կը զրկուի. անիկա պիտի սովորեցունէ ձեզի»:

Անկէ առիթն ալ 1900 տարիներ կանցնին և զեւ մարդկութիւնը երկուսն աւազակերտին պէս մանկական մտքով մը անոր խորին իմաստութեանը վերահասու

ըլլալէ այնքան հեռի է. ինչ բանի վերադրել անցեայ դարերուն մէջ յանուն կրօնի և Բրիտանացիութեան գործուած այնքան շարիքները և խտտութիւնները, հաւատաքննութիւնները և խորոյնները, ինչի' վերադրել ներկայիս յարանուանական այսքան բազմաթիւ բաժանումները և հակառակութիւնները, ինչո՞ւ Բրիտանացիական պետութիւնները քաղաքակրթութեան արտաքին կերպէն ներս հեթանոսական դարերու շահամուլ, աշխարհակալ, անիրաւ և անզորոյն սըրտէն տարբեր սիրտ մը չեն կրեր: Կրօնը տակաւին կը մնայ անապատին մէջ կոնչողին ձայնը, հազարաւոր միլիոնաւոր բերաններէ սրտագին մաղթանքներով «ստուծոյ թաղարարութիւնը խնդրուած և անոր կամքը որդերուած է. և չարին անիրաւ արարվածութեան տակ մարդկութիւնը կը հառաչէ և արցունքի ու արիւնի հեղեղներուն տակ կը խըղձուի...»:

Կրօնի էութեանը և դերին մասին որքան ալ յոռետես ըլլանք՝ տակաւին չենք կրնար չտեսնել մարդկային պատմութեան մէջ կատարուած փառաւոր բարեշրջումները՝ որոց մայրն ու դայնակն եղած է ինքը կրօնը. ներկայ քաղաքակրթութիւնը, իր բոլոր մեղադրելի խտտուածներովը, սերած է Բրիտանացիական կրօնէն. ու մէկը ինտո'ր կրնայ անտես ընել շարժումի այն մեծ համեմատութիւնը, որ տարուէ տարի կըտանայ քրիստոնէութիւնը և կը ձգտի իր բուն իտեակին. խնդիրը հոն է թէ ինչո՞ւ կրօնը իր բարձր կոչման և իսկական դերին արժան չէ ժամանակի այս ահազին միջոցին մէջ. և թէ մանաւանդ՝ ինչո՞ւ շատ գործիքը եղած է ահազին աղէտներու և պատուհասներու: Որովհետև տակաւին մարդիկ ըմբռնած չեն թէ ինչ է և ինչ բանի համար՝ կրօնը: Ինչպէս որ մարդկութիւնը կառավարութեան ոգիին ու ձեւին խնդրովը, լեռնաբերձ ալիքներու վրայ տասանող նաւի նման, բռնապետութեան ու անիշխանութեան երկու ծայրայեղութեանց մէջ կը տարուբերուի. նոյնպէս վարուած է ու կը վարուի կրօնի մէջ. ոմանք կոյր կրօնամոլութեան և ուրիշները խելայեղ անկրօնութեան կերթան, առողջ մտածումը և ճշմարիտ լոյսը գորգեան հանգոյցին մէջ ծածկուած կը մնան: Մենք չենք յաւակնիր ըսելու թէ այդ սոսկողութեանը հանգոյցը լուծած ենք. սակայն ունինք մեր սեփական հայեացքները զորս պիտի ջանանք պարզաբանել. և մեր նպատակին հասնելու համար նախ պիտի ցուցնենք թէ (ըստ մեր կարծեաց) Ի՛նչ Ո՞՞՞ է կր' ՐՈՆԸ:

Կրօնը գերագոյն էակին կողմէն Տիեզերակայութեան թեման ոգիին չէ. աշխարհակալութեան իմաստովը, պաշտելին պաշտուելու չէ որ կը ձգտի, երկրպագուներ դառնելու արշաւանքը չէ որ կը

գործուի. աստուածպետական մականը ժողովուրդներ իր տակը ընկնելու համար չվերնար. կրօնը սահմանուած չէ մարդկութիւնը իր արարչին իշխանութեանը տակ նուաճելու: Կրօնը այսպէս ըմբռնուած էր հեթանոսութեան մէջ ապրող մեր նախահայրերէն:

Մեր բազմաստուածեան նախնիք, ըստ իրենց հաւատալեաց, կուրու թիւնը տուող աստուծոյն սիրտը չկտորելու փափկանկատութիւնով, կոյրին «Լուսաւոր» անունը կուտային. նոյն մտածումով էր մանուկներուն սովորական երկու մահացու արտերէն մին «Մաղիկ» և միւսը «Վարդախտ» կոչեր են. ու այն տեսակ մը մահացու կեղծ որ մարդոց կուշ տերուն վրայ կելլէր ու կը մեռցունէր. «Շնորհաւոր անուանած են. (Հայաստանի ներքին գաւառներուն մէջ կըր մէկը) զի մայ' նին անէծք սայ, կըսէ «Շնորհաւոր հանես»: Անոնց աստուածներ մարդկութեան կողմուտին սպասող անկուշտ յափշտակողներ էին. անոնք կը կարծէին թէ գերագոյն ոգիները գրաստներու բազմութեամբ իրենց կային բոլորտիքը կեցած՝ առիթի մը կսպասէին որ շեղջուած ցորենը, գարին, ընդեղներ բեռցունէին և տանէին. ասոր համար կալին մէջ եղող մարդիկը երբ իրարու բան մը տալու ըլլային, «Առ» չէին ըսեր, որովհետև կը վախնային թէ այդ բառին արտասանութիւնը ոգիներուն յափշտակութեան գործին սկսելու նշանը պիտի համարուէր. ուստի «Առ» ըսելու տեղ «կալ» կըսէին. ոգիներուն մտքին մէջ կալ բաժը կալ գոյականին հետ չգիտելու խորագրութեամբը: Անշուշտ կրօնի մասին այս կերպ մտածումը և հաւատքը միայն հայոց յատուկ չէր. ու նոյն իսկ Գրիտանացի ժողովրդոց փոխանցուած է յայտնի աստիճանով. այդ կրօնական կեղծ համակերպութեան, վախի և ստրկութեան ոգիին. ըստ որում Աստուած բռնապետ մը և մարդիկ անոր ստորակ գերիներն են, Սուլթան Համիտին և անոր Հպատակներուն մէջ եղող յարաբերութեան օրինակին պէս. մին պիտի տիրէ, պիտի կեղծէ, պիտի ջարդէ. միւսը պարտի գոհ լինել. փառաբանել և Հպատակիլ, կեղծօրէն, առեքեսս:

Կրօնի ոգի մեղած այս դաւաճան խորհուրդը խափանելու նպատակաւ էր որ Թիսուս ըսաւ, «Որդիին մարդոց չեկաւ սպասուորութիւն ընդունելու, այլ սպասուորութիւն ընելու». ասոր համար էր որ իր ձկնորս աշակերտաց առջև ծուկի եկաւ ու անոնց ոտքերը լուաց. երբ իրեն հարցուեցաւ «Ո՞վ է մեծ երկնից թագաւորութեան մէջը». պատասխանեց, «Ծառան. ձեր ծառան ձեր մեծը ըլլայ, ցուցնելու թէ օրէնք մեր կրօնը արուած են մարդուն օգտին. ըսաւ «Շարաթը մարդուն համար է ու ոչ թէ մարդը շարա-

թին համար»: Մեծ վարդապետը որպէս զի հասկացուէր թէ Աստուած կրօնի միջոցաւ կը ներկայանայ մարդկութեան անոր կարօտութիւնները լեցունելու, ըսաւ «Ձիս կերէք, իմ մարմինս կերէք. իմ արիւնս խմեցէք. իմ մարմինս, իմ արիւնս, իմ կեանքս պիտի տամ ձեզի համար». ու խաչին խորհրդովը. խաչին վրայ սիրայօժար զոհուելովը ամենապարզ և ազդու օրինակը տուաւ՝ հասկացունելու թէ Աստուծոյ մարդոց հետ ունեցած յարաբերութիւնը կը հիմնուի Աստուծոյ անհասկարութեանը և զոհողութեանը վրայ: «Իր որդին տուաւ (զոհեց) որ անով կեանք ունենանք: Գրիտանացիական կրօնը Աստուծոյ և մարդկութեան մէջ հայր ու որդիութեան կապը եղաւ անով մենք ոչ թէ բան մը կուտանք՝ այլ ընդհակառակն «Աստուծոյ ժառանգորդները» կը հանդիսանանք:

Թիսուս այնքան յառաջ գնաց մարդուն բարձրացուցմանը մասին իր խօսքովը մէջ որ աղօթեց «Հայր՝ անոնք (մարդկութիւնը) իմ մէջս ես քու մէջը որ ամէնքս մի ըլլանք միութեան մէջ», Աստուածամարդը մարդուն աստուածացուցմանը կը նայէր:

Սակայն զժողովարար տգիտութիւնը, մոլեռանդութիւնը և կրօնաւորներուն հեղինակութիւն ստանալու հաշիւները՝ օգտուելով ժողովրդին անկեալ բարքէն ու խղճահարութեանէն, զայն զրկած են փառաւոր արտօնութիւններէ ու քաշեր են ստորնացնող հաւատալեաց տիղմին մէջ. հոն սպաններ են անոր արժանապատուութիւնը, ինքնուրոյնութիւնը, ինքնավստահութիւնը, կորովը եւ արիւթիւնը. անոր վրայ ձգեր են յաւիտենական ամօթի քողը և անոր սրտին տուեր են խղճահարութեան յաւիտենական վէրքը. զայն ճշուած համակերպութեան. քմեմեմի և երկիւղի արամագրութեան տակ ընկներ են, թեւերը կտորած արծիւի մը նման, փոխանակ օգնելու անոր որ թեւերը բանալով թռչի կրօնի սիրաշունչ և անհուն մթնոլորտին մէջ բարձր ու աւելի բարձր, տիրապետական սկզբունքներու տակ կաշկանդեր են մարդկութեան ազատ ձգտումները, և այսպիսով կրօնի դէմ բողոք մը յառաջացուցեր են, ու այդ տխուր իրականութեան առջև կը գտնուինք այսօր: (Շարունակելի)

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՊԻՆ

Արժ. Խաչ վարդապետին մեզի գըրած նամակէ մը կը տեսնենք թէ, իր Աստուծոյ թաղումը կատարելուն առթիւ մեր դուկից թերթին մէջ երեւցած կծու նախատինքներուն տեղի տուող բան մը ընաւ պատահած չէ. նորին Արժանապատուութիւնը Աստուծոյ շարական մը անարգելու փորձ երբէք ըրած չէ:— Ահա ե-

զերուծութիւնը: Յուզարկաւորութեան արտաբերութիւնը կատարուելէն և հարկ եղած միջոցներով տրուելէն ետք, երբ վարդապետը մեռնալին սենեակէն ուրիշ սենեակ մը կերթայ, Ասորի երիտասարդ մը կուգայ մեռնալը շրջապատող կանանց քով և կը հարցունէ թէ, «Տակաւին լալու իշտակ ունի՞ք, կուզէ՞ք որ լալու գովասանք մը սկսիմ որ կուշտ մը լաք և սրտէրնիդ աղէկ մը պարպէք»: Կիններն ալ «Հա» կըսեն. և ահա լալկաններու ահեղագոչ գովասանք մը կը փրթի. ու ոչ թէ շարական. անոնք որ ոչխորէին քիչ շատ ծանօթ են, գիտեն թէ Հեթանոսական օրերու մէջ լալկան կինն կային որք մեռնալին բարեկամաց կողմանէ կը վարձուէին որ գիրնը կուշտ մը լալուներու համար գովասանքներ կըսէին. այս ողորութիւնը տեղ տեղ և ատեն ատեն Քրիստոնէից մէջ ալ երեւցած է. Տիգրանակերտի Հայերը նոյն սովորոյթը ունէին մինչև Փիլիպոս եպիսկոպոսի օրը՝ որ վերցուցնել տուաւ. ցուցնելով թէ զա մի Հեթանոսական սովորոյթ է, իսկ տեղոյն Ասորի Հայերենակերտը պահէր են զայն. և յիշեալ երիտասարդը նոյն սովորոյթը կատարէր է. իսկ վարդապետը այդ Հեթանոսական սովորութեան դէմ է որ զայցեր և դիտողութիւն քեր է՝ մինչև երբ այս խեղճութիւնը մեռնալին վերջ մեր դուկից թերթին համար միայն մէկ փոփոք ունինք. տեսնէինք որ մը որ իրենցմէ և իրենցիններէն դուրս լաւ բան մը տեսեր են:

ԵՐԱՍՏԱՍԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Իստակ պէկի ազատագրանքն ունի խմբագրութեան Տ Ե տրամադրելի ըրած է, եթէ ուրիշներ ալ գտնուին որ ուզեն իստակ պէկի շիրմին վրայ յիշատակարան մը կանգնել: Այս գաղափարը շատ գեղեցիկ կը գտնենք. հազուադէպ առիթ մի է ցուցնելու թէ թիրքին դէմ ցեղային միջոցներով թէ թիրքին չէ որ ունինք. այլ թիրքերու գործած անգթութիւններուն և շարիքներուն դէմ ենք. թէ կատանք գաղան Ջիլքո պէկերը ու կը պաշտենք զժապարհ իստակ պէկերու յիշատակը: Երիտասարդական այնպիսի արտահայտութիւն մը թիրքու բարի ազդեցութիւնը գործէ ինչպէս թիրքերուն վրայ: Խորհրդէն եկած վերջին նամակները կը ցուցնեն թէ վերստին եւ աւելի անողոք կոտորածի մը վախը սկսած է տիրել հոն և թէ այդ վախէն հարկուաւոր ընտանիքներ Ամերիկայ կուգան:

ՍՈՒՏԸ ԵՒ ԾՃՄԱՐԻՏԸ

Օր մը Սուտն ու ծՃմարիտը միասին գետը լողնալու կերթան. ուր բաւական լողանալէն ետքը սուտը առաջ կելլէ ջուրէն և ծՃմարտութեան հանդերձները հաղնելով կերթայ. այդ օրէն իվերէ որ ծՃմարտութիւնը մերկ ու սուտը ծՃմարտութեան հանդերձներով կը պարտին:

Առակին նման՝ ատեններ իվեր է որ մասնաւոր տեղեր Հ. Յ. Գ. կուսակցութիւնը Հնչակեաններու անունովը կը շարժի: Այս մասին ըսելիքներս ուրիշ առթիւ:

ԿԱՅՄԱԿ

ՓԻԼԻՊՊԵԱՆՑ ԽՆԴԻՐՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՁ

Միացեալ Նահանգաց գաղթային կառավարութեան խնդիրն մեր ընթերցողաց անծանօթ չէ: Նախորդ յօդուածով մը ցուցած եմ թէ այդ խնդրոյն գոհացուցիչ լուծման համար երկու կերպեր առաջարկուած են, որոց մին է Մասաչուսէթս, իսկ միւսն է Կոնսերվատիվութիւն: Սակայն ամերիկեան ինքնաշարժութեան մէջ կան ծերակուտականք և երեսփոխանք, որք այս երկու կերպերէն ոչ միոյն հաւանութիւն կուտան, և կըսեն թէ Միացեալ Նահանգաց համար բացարձակ անխրատութիւն է իրենց սահմաններէն անդին որեւէ ուրիշ երկիրն:

րու վրայ տիրել, և մասնաւոր յաղթարեալ ցեղերու կառավարութեան ձեռքը որոշել առանց անոնց հաւանութեան: Այս գաղափարը ծերակուտականք և երեսփոխանք ամերիկեան կառավարական իրաւաբաւ մեթոտներուն ջերմ պաշտպաններ լինելով, թո՛ւր մէջ քրտնալիտութեան անունը գրութեան կոչում կընեն և կը ջանան ապացուցանել թէ «ամէն մարդիկ միմեանց հաւատարմ տեղ ունեն» և թէ «կառավարութիւնը իրենց հեղինակութիւնը կառավարելու համար նախապէս իրենց արտաքին քաղաքական փոփոխութիւնն են, և հաւատարիմ արտաքինները նախահարց աւանդութեանց»:

Ներկայիս մեր ընթերցողաց ծանօթացնել կուզեմ ասոնցմէ մին, այն է Մէյնչուսէյի աւագ ծերակուտական ծորձ Թ. Հոր, որ ընդմիջտ պատրաստ եղած է բառալի իւր ձայնը ինչպէս կը կայնէր, որպէս արտա նաև մեր քաղաքին ճգնաժամի բռնու: Ծերակուտական Հոր Դձ տարեկան աղագրք, յաղթանաճամ, կորուստի և մաքրակրօն ամերիկացի մէջ, բնիկ Աստու քաղաքին, որ կը բնակի, երբ իւր պաշտօնին բերումը Ռաշիսիլըն չէ: Այս մարդը իրիշտակութեան կուսակցութեան առաջնորդներէն մին լինելով հանդերձ, գաղթային խնդրոյն մէջ իւր կուսակցութեան քաղաքականութիւնը խոստի քննադատած է իրր հակ ամերիկեան և անարդարանալի: Սակայն ինչպէս Միլիտերիս Ռիփլընքըն անուն հարածանօթ թերթին մասնաւոր խմբագրական մը կը շեշտէ, ծերակուտական Հորի տկարութիւններն միջտ սա երած է որ ըրիփլընքըն կուսակցութեան թերթիները իրենց տեղ կը ձայնէ և կը նշաւակէ. բայց նոյն ատեն իւր իսկ քուէով անոր ձեռքերը վեր կը պահէ: Ինչ օգուտ ունի ազգային ծերակուտական մէջ պերճախօս ճանար արտասանել ընդգէմ քաղաքականութեան մը, զոր յետոյ իւր քուէով կը հաստատէ Գարձեալ ինչպէս մեր ընթերցողը կը յիշեն. թէ և Յայտարարութիւն Անկախութեան անուն յիշատակելի զբրութիւնն կը շեշտէ սա փիլիսոփայական խնդիրը թէ մարդիկ միմեանց հաւատարմ տեղ ունեն են, այդ գրութիւն երկրին ներկայ տարի և պիտից բերումը մեռնալ առ մը մնացած է, և արդի գործնական խանութեաններու քաղաքականութիւնը ձեւելու չափ ոյժ չկրնար ունենալ: Ծերակուտական Հոր կրէ թէ որովհետեւ Փիլիպոսի օրէնքն և իրենց քաղաքական կորովը ապացուցանելու չափ կուտած են, իրենց բողոքին ձեռքուցելու են, որպէսզի անոնք իրենց քաղաքական փրկութեանը գործեն: Սակայն գործնական խնդիրն սա է: Փիլիպոսի օրէնքը (Իրր 10 միլիոն խառնած իններ) քաղաքական անկախութիւնը ի բարին գործածելու չափ մշակելու են:

Ո՞վ է կարողագոյն դատաւորն մանկան մը կարօտութեանց, ծնողք թէ մանուկն: Ամենեւին տարբերութիւն չընեն թէ ամերիկեան աստուծութիւնն ինչ է այսօրինակ իրաց մէջ. Փիլիպոսի օրէնքն այժմ քաղաքական կենաց այն փորձառութիւնը, իմացական մշակութիւնը և բարոյական կորովը, զորս Լէքսինգթոնը քաղաքականութիւնը ունէին, և երբ իրր թանձրացեալ արտայայտութիւն մը անոնց կարողութեանց Անկախութեան Յայտարարութիւնն ի գիր առնուցաւ: Փիլիպոսի օրէնքն չափերն իսկ կը պահանջեն որ գէթ ժամանակ մը մինչև որ իրենք քաղաքականացան չափահասներ լինին, անոնց օրէնքներովն Միացեալ Նահանգաց ձեռքին մէջ լինին: Այս երկիրն իւր քաղաքական փառասուր հաստատութեանց համար Անգլո Սաքսոն ցեղին քարաւոր փորձառութեանց կը պարտի: Սա իրողութիւնն է թէ արեւել, մատենագրութեան և կրօնի նշանակութիւն կար Անգլոյն հաւ մեծագոյն դիւրացուցած է այս երկիրն գործը: Ինչքան փիլիպոսի օրէնքն ուր մայրամասն են այսպիսի անցեալ մը:

Ծերակուտական Հոր մեծախիտ եւ վեհագիր անձնաւորութիւն մ'է, սակայն իւր վարդապետութիւնն չկրնար կիրաւ

ուել լինել գարնիք ի վեր հարստահարութեան տակ ընկճեալ կէս բարբարոս ցեղի մը:

(Շարունակելի)

Հ. Ս. ՃԷԼԱԿԱՆ

ԲԱՐԻՆ ԹԷ ՉԱՐԸ

Չարին ինչպէս գալը, ստեղծուած իր մը գոյութիւն մը լինելը կամ չը լինելը մեր յօդուածի նպատակէն դուրս է մեզի համար պէտք եղածը սա է թէ ներկայիս մեր մէջ կը գործէ Չար Ողորդ իւր գործունէութիւնը կը տարածի մինչև իսկ ազգային դատի պաշտպանութեան սպարէզը. հոն ալ ցոյց կուտայ իր Մարիֆէթը, կը պղտորէ ամէն միւսը. կը պաղտեցնէ ամէն սիրտ կը խանգարէ ամէն գաղափար, կը զրպարտէ, կը պախարակէ կը հայտնի եկեղեցականն ալ աշխարհականին ալ, եկեղեցին ալ բնիկ աշխարհականն ալ աղքատն ալ. վաճառականներն ալ արհեստագործն ալ. գրագէտն ալ տղէտն ալ. որովհետեւ իր յատկանիշն ալ այն է, միշտ կը նայ իր շուրջը, եւ կը տեսնէ թէ «Ամենայն ինչ չար է», «Ինչ միայն կայ. . .» այս անտանելի զբոսանք կը պատճառեն իրեն այն բոլոր բաները՝ որոնց նայած էր բարոյն արարելը և տեսած էր թէ «Բարի են»:

Ոտքերս այս ինչ կամ այն ինչ մարդու կամ կուսակցութեան ուղղակի շեշտման կուսակցութիւն իր մէջը ունի բարին ալ չարն ալ. իրր մարդկային ազգ մը մեր մէջ ըստ մը բաժանումներ կրնանք ունեննել, շարժումներ սերկու զիբաւոր բաժանումի ենթակայ են. մարդկային կամ հակա մարդկային բարին կամ չարն:

Կան շատ մարդիկ որոնք «Ինձի չը դպչող օճը թող հազար արիւ» քաղաքականութեան կը հետեւին, և շատերը կը դատաւարտեն այս երկու գործութեանց միջև մղուած կռուին: Ինչպէս ինչո՞ւն համար, չը գիտնալով թէ իրենք հակասութեան մը, ինքնախարհութեան մը զուէն են. մարդու համար բարոյն և չարի մէջնեղը կենալու տեղ մը չ'կայ, զայն անստանները գրաւած են. «Ծըլմարտութեան» բարոյն ոտնակոխմանը հանդէպ անտարբեր կենալու համար մարդէ ցած արարած մը ըլլալ պէտք է»:

Յոյն փիլիսոփան սոսկով մը լաւ կը բացատրէ զայս — հաւատար քանակութիւն հաւատար հոտ, հաւատար տեսք ունեցող յարդի երկու կայտերու մէջնեղը էջ մը կրնայ կայնիլ և անօթութիւնն մեռնիլ, չը կարենալով լուծել թէ այս երկու հաւատարներէն ո՞ր մէկը ընտրէ. սակայն մարդս, մինչև իսկ երբ չարն ու բարին հասարակ գործութեան մը իրենց քաշին զինք, կընտրէ մին շուտով որովհետեւ կրնայ խորհիլ թէ՛ ուէ կողմը ընտրելով վնաս մը ըրած չըլլար, չ'է որ երկուքն հաւատար են իրեն համար: «Մարդս ինչէ քրիստոնեայ է, այն որ գիտակից է իր մարդկութեանը, նա կը գործադրէ քրիստոնեական սկզբունքները» կըսէ Տէրտուզիանոս ֆիլիթո Պըրուսը. վերջին տարիներու հոգեկաւոր քարոզիչը հետեւեալ կերպով կը փաստէ. «Մարդս կայուն արարած մը չէ, պէտք է քայլէ. ու այն քայլը որ դէպի սորիւրը ուղղուած չէ, անսպասելի կը սանի»:

Սակայն բարոյագիտութեան ուսուցչի հետեւեալ խօսքերը այս մասին ալ իր եղական ու գերիշխող զիրքը գրաւած է. «Այն որ մեզի դէմ չէ մեզմէ է, ու այն որ չար ինչ է մէջէն չարն է»:

Մարդուն համար միջին ճամբայ մը չկայ, կամ բարի ըլլալով չարին պարտինք հակառակի կուտիլ անորդէմ, կամ չար լինելով հայածենք բարին. ուղեք չուզենք գուռելի մը պիտի պատկանինք, որուն զլուրը պիտ կենայ Ստուտած կամ ստատանայ. ուրիշ դիրքի մը անտարբերութեան մը ձգտողներ՝ Տիրոջ իրենց անանդամ լուծման երկրէ մէջը ծածկող Անկախութեան և շարժանքի մէջ, արժանի դատաւարութեան և ժառանգակից սատանայի: Ուրեմն պարտաւոր ենք որոշել մեր զիրքը մեզի ներկայացուած ամեն խնդիրներու մէջ: Չը Լ ս ե ի և և

չը տեսնել մարդ ըլլալէ դադարի՝ ասոնք միայն կրնան մեզի խաղաղ կեանք մը շնորհել. և թէ ոչ կեանքերնս կուր մընէ, կամ Աստուծոյ դէմ պիտի կուտինք, կամ սատանայի դէմ, ուղեք չուզենք մենք զմեզ միւս դէմ յանդիման պիտի գտնենք՝ անձնագոհի, ազգազոհի, փրկիչի կամ մատնիչի, կործանարարի կամ կենարարի, զրպարտողի կամ տղատողի, աղօթողի կամ հայհոյողի, և պիտի որոշենք մեր բաժինը, ընտրութիւնը մեր ամենօրեայ մի պարտականութիւն է, կենաց և մահու խնդիրն է այդ շնորհակալ անկախութիւն, բարին պաշտպանել, բարուն ախտոյն կանգնել մարդկութեան բնական և միանգամայն սրբազան պարտականութիւնն է:

Այս օրեր երկու խնդիրներ կան մեր առջև, որոնց վրայ շարք իր դրօշը պարզել կը յանդգնի, երկու մեծ անձնաւորութիւնը կը զրպարտուին. մին բարձրարժեք եկեղեցական մը, եկեղեցական մը, միւսը երեսելի զբաղէս մը. խմբագրապետ մը, առաջնոյն խնդիրը կը կարծէինք թէ փակուած է, ժամանակին պարզուած էր ճշմարտութիւնը Տիգրիսի էջըրուն մէջ, խնդրոյն տեղեակ, և դէպքի վայրը գտնուող անձնաւորութեան մը կողմէ, առանց սակայն գտնուող հերքել փորձելու (և կարծես խօսք չհասկնալու երբում ըրած են) միևնոյն խօսքերին կը կրկնեն. մենք կը կարծենք թէ «Արդարաց օճք ոչ գոն», կերեւայ շարին ալ այնպէս է եղեր, այս մասին երկու կետերը տարէն շեղելով կը բաւականանանք, Ս. Պատմաբան զէպելի Գեր. Սարաճեան Սրբազան (որ իր թէ գաղտնիք մը յայտնելը է ըսելով կը զրպարտած էր որ արտաքին գտնուէր, և երբ վերադարձած էր յիշեալ անձնաւորութիւնը բանտարկուած գտած էր. Բ — ոչ թէ այդ մարդու իսկական անունը Ռուսական հիւպատոսին տը, այլ մինչև իսկ այն մարդուն խնդիրը նոյն հիւպատոսի յայտնուելուն, խօսուելուն հակառակ էր. այս մասին աւելորդ գրել չ'արժեք, ու խնդիր միանգամ ընդմիջ փակուած կը համարինք, «Որ ունի ականջս լսելոյ լուրից»:

Կենսական երկրորդ խնդիրն է. և որուն համար շարժելու պարտականութիւն ունինք. այն է Պ. Արփիար Արփիարեանի դէմ շատոնց յարուցում, Տօքթ. մանրագրութեան քաղաքացիական և մօտ օրիս հարտարկուած ամբաստանողութեանց խնդիրը:

Պ. Արփիարեանի գրական աշխատութեանց, գրագիտական հմտութեանց մենք ամենքս ծանօթ ենք. սակայն նոր կենսագրութիւնը մեզմէ շատերուն անծանօթ է՝ ներկայի ամբաստանութիւնը շատ հաւանական է անհիմն փաստերու և կամ սխալ հասկացողութեանց արդիւնք ըլլան. սակայն և այնպէս կարելիութեան ամսամասին մէջն ալ կրնայ ըլլալ որ ճշմարտութիւններ լինին. բարոյն կողմնակիցներու պարտականութիւնն է արդար և չեզոք (ոչ կուսակցական) դատարան մը պահանջել. խնդրոյն լուծումը երկու տեսակին ալ բարեկամաց շահաւոր է. եթէ Պ. Արփիարեանը անպարտ է, յաղթանակը «Բարի, ինչն է, որովհետեւ յաղթուած կը լինի շարի աղքատ սոսկալի յարձակումի դէմ յաղթանակը տանիլ եթէ Պ. Արփիարը յանցարար էլ է, յաղթանակը նորէն «Բարի, ինչն է, շարին քան չկայ ամէն բարի կամեցողք, պիտ քաջալերուին որ չար գործիքի մը մէջն են, բարոյն Աստուածը այնքան զբոսական ծառայութիւն ստացուէ, և այժմ մեզմէ պահանջուածը ազգային թուքն է յանցարի, շարակամի ճակատին վրայ, իւրին և շարք անդամ մը ևս կատաղի կուտի մը բուռնած են, այս պարագային ևս անտարբեր դէպքերս անբարեկամ, հակամարդկային, հակազգային և հակ Աստուածային են. ձայնը իսկ պէտք է բարձրադաս, ու արդարութիւնը պաշտպանուի: Բարին և Չարը ներկայացած են մեր առջև. ընտրութեան օրն է՝ քուէնիս տանք:

Հ. ՀԱՅՈՒՆԻ

ՆԱԽԱԿ ԳԱԼՔԱՆԷՆ

Պուրկաղ 5 Մարտ 1900

Անցեալ նամակս մէջ յիշեալ էի թէ քաղաքի մէջ Հաստատուած կաշիի վաճառակն Պ. Առաքել Ալթրարմաքեան անուն անձը կամրաստանէին իրր'ու Հեղինակ գէնքերու աւագակութեան Այսօր այդ ամրաստանութիւնը վճարի մը կը փոխուի, որ սպաննութեամբ ալ վերջանայ: Հոս նպատակ չունիմ Առաքել Ալթրարմաքեան անուն անձնաւորութեան արգարացունելու, այլ կուզեմ հասկնալ թէ ինչո՞ւ Համար Գաշնակցութեան Պաշտանեան կեդր. կոմիտէն լուծութիւն կը պահէ և չուզէր Հրապարակաւ յայտարարել յիշեալ երիտասարդին աւագակութեան պարագաները, քանի որ նա բարձրակարգ կուրսայ ամէն բան եւ կըսէ և ոչ Գաշնակցական, ոչ յեղափոխական և ոչ ալ գէնքերու խնդրոյն հետ կապ ունեցած եմ. թող Հաստատուած այս բաններու անստոր ըլլալը այն ատեն յատարան եմ տղայոյն ունէ պաշտօնական մարմնի մը վճարին ներքեւ իմ վերջ գնիլ...

Արդէն ամրաստանեալ Պարոնին ուրիշ բան չը մտար պատասխանելու, երբ որ առաջարկներուն Հանգէլայ յոռութիւն պահելու անց տեղոյս կոմիտէի անդամներէն Տիար Քէրէզ Չամչեան, Ռուբին Պալպաեան, Երեմիա Թորիկեան Յակոբ Փախազեան, Միքայէլ Սպէնեան և Մարտիրոս Քէնտիկեան անուն անձնաւորութիւնները կը յայտարարեն թէ «Առաքել Ալթրարմաքեան երբէք մասնակցութիւն ունեցած չէ իրենց կոմիտէին հետ»:

Ինչ կըսէք այս անորակին խոշազողներուն, երբ որ այս հակասական առարկութեան մէջ զարմեալ ամենայն աւանդութեամբ կը յանդգնին յիշեալ պարոնի անձնակն պահանջները յայտնի կերպով գրաւի տակ գնելու և մասնաւոր Հրապարակաւ վաճառակներուն սպառնալիք կարողաւ որ անոր իրենց վերջ եղած գանձի վճարումներն ուղղակի Գաշնակցութեան Պաշտանեան կեդ. կոմիտէի լիազօր ներկայացուցին յանձնեն, հակառակ պարագային պատասխանատու պիտի նկատուին: Բայց, կը ինչո՞րքով, աշխարհիս ո՞ր օրինագրքին մէջ յիշեալ, գրուել և կարտացուցեր է այս տեսակ խարոյկական բանարարութիւն մը:

Նոյն իսկ բռնապետական պետութիւններու ծրագրին մէջ սասնկ սորոսալի յիշատակութիւն մը կ'ս:

Թէ ինչո՞ւ այս աստիճան սորոսութիւն յանձն առնելու պարտաւորուած է Պաշտանեան տիրահաշակ ներկայացուցիչը, ըսմով կը նայի որ Պուրկաղի մէջ կը թանկ կ'ըլլան, ու կամ պոռապոռներու թիւը շատ է. կը նայի որ իր գրութիւնը դատապարտուած է անկողմի մը մէջ խորատուելու և այդ անտարբարութիւնը ազատելու Համար միմիայն վարձկան բազուկներու կը կարօտի. վերջապէս այս բոլորը գրեթէ ինչ թանկանի կապուած է, իսկ այդ նիւթակները կը պակսի իրեն:

Այսպէս, այս գեղեցիկ հանգամանքներու ներքեւ, Պաշտանեան Պ. Ներկայացուցիչը կրցաւ գտնել անձնաւորութիւն մը, որ Աստուծոյ իրեն տուած շնորհը անգամ չը գիտեր խօսել և զրոյն հաշուէն զատ ուրիշ ընկերական ոչ մէկ մէքանայութիւններու վրայ գաղափար ունի: Ինչ վրայ... աւելի աղէկ որ մեքեանայութիւններու վրայ գաղափար չունենայ, այլ զրամը տայ իրբէ հատուցում իրենց կոմիտէին անդամներուն գործած խաչազուլութեանը, յետոյ կեանքը տայ իրբէ դատաւան իրենց քստմանը վճարին փոխարէն, քառութեան նոխար մը պէտք էր և գտեր են:

Ո՞վ կըրար յոռութեան, Հաւասարութեան ու ազատութեան անձնորոշներ կէք, վեր առէք դրամները, ուր էք, ձայն առէք այս գուժալից արձագանքիս... Միթէ՞ Հայ. յեղափոխութեան նպատակը գաղտնի կերպով կառուակերպուած եղբայրասպանութիւն մը է, և թէ ոչ եղբորը ազատութեան Համար իր անձը զոհող նախատակներու նուիրագործած գաղափարը, սոյն գաղափարի ոճիրին մէջ գաղափար մը կայ որ մեզ գէպի անցեալը կը տանի և մասնանջ կընէ պի կարգ մը սպաննութիւններ, որոնք

կատարուեցան այդ անձնաւորութիւններու ձեռքով և ծածկուեցան Համակրութեան ցոյցերով: Ինչե՞ր... ախ, արդե՞հ ինչե՞ր եղան որոնք անգիտակցաբար ծախսահարած ենք: Ու այսօր այդ մարդիկ իրենց զերեզմաններէն դուրս գան ու մեր առջին խոստովանին իրենց յանցանքն (?) որ ուրիշ բան չէ, և թէ ոչ այժմեան խաչազողներու փաստակարար թիւացքին հանդէպ խղճի անդամագրելի բողոք մը, արդե՞հ ինչ պատասխան պիտի տանք, արդե՞հ մեր ամօթապարտ ձակատնիս ինչպէս պիտի բարձրացնենք և մեր Հոգիին անդուսպ չարչարանքին ինչպէս պիտի սովանք:

(Շարունակելի)

ՎՏԱՐԱՆԻ

Ապրիլ 22 ին գումարուած Պատանի Հայոց ընդհանուր ժողովու կորոչէ զիմէն Յեղափոխական երկու կուսակցութեան (Գաշնակցական և վերակազմելի Հնչակեան) որ Արիւար Արիւարեանի վրայ բերուած ամրաստանութիւնները քննելու Համար չեղցք ատեն մը կազմուի ճշմարտութիւնը երեւան հանելու:

Կ'որոչէ նաև Հրաէք կ'որոչէ Ամերիկայի միւս Հայաբնակ քաղաքներու որ նմանօրինակ զիմուներ ընեն երկու կուսակցութեանց:

Որոշման օրինակներ զրկուած են Դրոշակի, Մարտի, և Հայրենիքի խմբագրութեանց Հրատարակութեանց Համար: Ժողովի կողմէն

Ատենապետ Ա. Տիրան Ատենապետ Յ. Սահակեան

Լորէն 30 Ապրիլ 1900

ՊԱՏՈՑ ԱՏԵԱՆ

Հնչակցական կուսակցութեան տեղւոյս Մասնաճիւղը իր սարքած մէկ ժողովը արամադրելի բրաւ չեղցք ժողովրդին: Տեղի առջով ժողովի կողմէ մասնաճիւղին զրկուած 18 ստորագիր Հանրագրի մը որոնք կուղին արձագանք տալ Պ. Յ. Իրաքէնտէրի և Պ. Կ. Յարիւրեանի կողմէ եղած Պատու Ատենանի կոչին. և բողոքախոսան պահանջարկ մը զիմու ընել երկու կուսակցութեանց ձեռնարկ մարմիններուն որ ջանան իրենց իրենց կողմէ ոյժ տալ այդ կոչին. և ասով ճշմարտութեան վերջնական յաղթանակով իրկել ազգին յեղափոխութեան բարոյականը:

Ժողովուրդը խանդավառ սորմողութեան տակ, հակառակ տեղւոյս դաշնակցականաց անհետան խորհրդներու, վերոյիշեալ նպատակի իրագործման Համար ընտրեց 5 անձերէ բաղկացած յանձնախումբ մը, առանց քուէի իրաւունք տալու կուսակցականներուն:

ԲԱՊԱՐԱՊԱՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՎԱՆՔՆԵՐԸ

Կ. Պուլէն եկած հեռագրէ մը կիմանանք թէ, թիւրք կառավարութիւնը Մ. Նահանգներէն ուրիշ պահանջարկ մը ստացեր է Հայկական տուգանքներու մասին, որուն վրայ Սուլթանը հեռագրաւ իր Ոչինկթնի պաշտօնիայէն ուզեր է իմանալ թէ արդե՞հ Ամերիկեան կառավարութիւնը իր պահանջին մէջ մինչև ո՞ր աստիճան յառաջ պիտի երթայ, որուն թրքական պաշտօնեայն կը պատասխանէ թէ առայժմ չերեւելի որ Ոչինկթնի կառավարութիւնը նիւթական ուժ գործածելու շարժում պիտի երթայ. այդ «Առայժմ», խօսքը բաւական մեծ մտատանջութիւն պատճառներ է թիւրք պաշտօնեաներուն ի՞նչ Պոլիս. որոնք կը վախնան թէ վաղն ալ նիւթական ուժ կրնայ յառաջ գալ:

Սուլթանը զիւրանագիտական ձեռնածութեան մէջ չարձուցեալ և խարբրելի Միսիստարա'ան չէնքերու շինութեանը և Ռուպլիթ Գոլէճին վրայ նոր չէնքեր աւելցուցելու մասին Սուլթանին կողմանէ շտապեալ արուած իրատեքները այն յոյսով եղան թէ, թերևս Մ. Նահանգաց գրգռուած միտքը գէթ առժամապէս գոհացում գտած ըլլալով Հանդար-

տէր, սակայն երբէք որևէ աղղեցութիւն մը չունեցաւ:

Ոչինկթնի կառավարութիւնը իր պահանջը յաղղեցուցելու մասին շատ վրձնական արամագրութիւն կը ցուցնէ:

Այս տուգանքի խնդրոյն մէջ Ամերիկայի գէմ Եւրոպական նախնադարձութիւն մը յառաջ բերելու փորձը Սուլթանին կողմէն յաղղեցաւ մինչև աստիճանմը. Եւրոպական մամուլին մէջ բաւական արտունջներ բարձրացան Մ. Նահանգաց այդքան յախուռ կերպով Ամերիկեան գործերուն մէջ մտնելուն գէմ. ըսին թէ Մ. Նահանգները շատ յառաջ կերթան, Եւրոպայի արժանապատութիւնը կը վերաւորեն, և ն. սակայն Ոչինկթնի կառավարութիւնը ինքզինք այնքան զօրաւոր կը գայ որ այդպիսի արտունջներու ահանջ չկարեն. և իր նպատակը իրագործելու Համար նորանոր քայլեր կ'առնու:

Սուլթանը ուրիշ խոզ մը փորձեց. ըսելով թէ թրքական պատանիներն ալ փաստեր կրած են Ամերիկայի երեսէն, ուստի վերջինն ալ պէտք է որ անոնց Համար հատուցուի ընէ. բայց Ամերիկեան կառավարութիւնը այդպիսի խնդրոյ գոյութիւնն անգամ չձեռնարկ և կըսէ Գուբուսայիք տուր. աննիւթիք վրայ ետքէն կը հարկնէք:

Այժմ Սուլթանը տուգանքի պահանջը վճարելու որոշման եկած կերեւոյս, սակայն վճարումն ալ ձեռնածութիւնով ընել կը խորհի: Ինչպէս ըսած էինք. Սուլթանին գոտարութիւնը այդ \$90,000 վճարելուն մէջ չէ, այլ թէ երբ Ամերիկայի պահանջը գոհացուէ, ասով պարտաւորած պիտի ըլլայ որիչ Եւրոպացիներուն ալ կրած վնասները հատուցանել, որոց գումարը ահագին համամատութիւններու կը հասնի: Սուլթանը առջի օրերը լուր մը հաննք թէ ծովակալ Ալմէտ փաշան Ամերիկա պիտի զրկէ Ամերիկեան մարտանաւերու կազմութիւնը քննելու. հիմա ալ կուի թէ Ալմէտ փաշան կուզայ Հոս մարտանաւ մը գնելու երբ մարտանաւը գնէ որոշուած գնոյն վրայ \$90,000 աւելի պիտի տայ. որը երթայ տուգանքի պահանջին. սակայն միւս կողմէն տուգանքը վճարուած ըլլալու ծածուկ մնայ. Եւրոպական պետութիւնները չզիտան թէ Ամերիկայի պահանջը վճարուած է: Զեռնածութեան այս ձեւը թերեւս ծիծաղելի Համարուի, որովհետեւ ինչպէս կարելի է որ ասանկ բացայայտ բան մը ծածուկ պահուի: Սակայն թէ չէ այդ առջև ունենանք որոշոր այն բացայայտ բաները որ Սուլթանը Եւրոպական դեսպաններուն ինքնախաբէութեանը առջև ծածկեր է. այն ատեն երբէք չպիտի զարմանանք որ այս գաւեշտն ալ յաղղի: Թող Եւրոպական պետութիւնները յայտնապէս գիտնան թէ Ամերիկեան պահանջը վճարուած է այն ինչ կերպով, բայց չէ՞ որ Սուլթանը անոր պիտի ունենայ ըսելու թէ «Իրօք Ամերիկեան կառավարութեան դրամ տրուած է, բայց այդ դրամը անկէ գընուած այսինչ մարտանաւին զինն է»:

Չէ՞ որ խնդրոյն վրայ զիւրանագիտական քողը նետուած է ու դեսպանները այդ քողը վերցունելու դժուարութիւնը յանձն չպիտի առնեն. ուրիշ խոզ յաղղուած է. և անման ձեռնածուն կը ծափահարուի:

Արդէն Եւրոպական դեսպանները իրար անցեր են, մէկը միւսին ետեւ կերթան Ոչինկթնի արտաքին գործոց պաշտօնատուներ Հարցունելու թէ այս պահանջին մէջ Ամերիկեան կառավարութիւնը որքան յառաջ պիտի երթայ. որոց կը պատասխանուի թէ «Այս կառավարութիւնը իր պահանջը գանձելու մասին շատ հաստատ է. բայց թիւրքին հետ պատերազմ ընելու մտադիր չէ», ատկէ կը հետեւցուի թէ եթէ գանձումը չկատարուի զիւրանագիտական յարաբերութիւնը պիտի խզուի թիւրք պաշտօնեայն տուն ձամբելով:

Եւրոպական տեսպանները արդէն սկսեր են իրենց Հպատակներուն ալ կրած վնասները Սուլթանին պահանջել:

Կ. Պուլէն Ամերիկեան թերթերուն եկած հեռագրէ մը կը տեսնենք թէ Սուլթանին ներկայացուած երկրորդ պահ-

Հանջագիրը գրեթէ վերջնագրի մը գորութիւն ունի եղեր, վճարումի ժամանակին Համար «Անիմպայէս», բառը գործածուեր է:

Սուլթանին Ամերիկայէն նաև գնելու խոզն ալ պարտաւոր ելաւ. որովհետեւ պատասխանուեցաւ թէ Ամերիկեան կառավարութիւնը ծախու նաև չունի երկրորդ թէ այդ տուգանքի խնդրը գրամականէ աւելի պատուոյ խնդիր է. պէտք է աշխարհ գիտնայ թէ Մ. Նահանգները իրենց պահանջը գանձեր են: Սուլթանը ուրիշ ձեռնածութիւն մը փորձեց առաջարկելով որ խարբերի միսիստարաց չէնքերուն ու Գոլէճին շինութիւնը իրեն ձգուի. որ պետական գանձէն շինել տայ իսկ այդ ալ մերժուեցաւ:

Ամերիկեան կառավարութիւնը այս խնդրոյն մէջ այնքան յառաջ գացեր է որ ալ ետ չկրնար դառնալ, հիմայ վերջնագիր մը զրկելուն վրայ կը խորհուի. նախագահը յատկապէս այս խնդրոյն վրայ խորհրդակցելու նպատակաւ իրեն քով կանչեց Երտաքին գործոց և պատերազմական նախարարները: Կառավարութիւնը քննութիւն մը կատարելով տեսեր է թէ թիւրքոյ նաւային ոյժը կը բաղկանայ 9 պատերազմական նաւերէ, որոց մին առաջին կարգի, մին Բ. կարգի ու եօթը երրորդ կարգի են. և 20 Ծովեզրի պաշտպանող թիւնածածամ կայի և 40 թորփետո մականներ ունի:

Ամերիկեան քաղաքացիութիւնը ընդունող Հայոց մասնաւոր ուղարկութիւնը կը Հրախրենք Թուրք կառավարութեան հետեւեալ որոշման:

«Օսմանեան Հպատակներն երբ Սուլթանէն մասնաւոր արտօնութեան օտար Հպատակութիւն ընդունին, ալ չեն կրնար վերադառնալ ի Թուրքեա: Իսկ չեն թէ Օսմանեան Հպատակութեան դատնան կրկին, այն ատեն միայն կ'արտօնուի անոնց ի Թուրքեա մուտքը»:

Այս որոշում Հաղորդուեցաւ առ որ անկէ»:

(Բիւզանդիոն)

ՆՊր կեԱնՔէն կիմանանք թէ Օրմանեան Պատրարքը Չարին գանգատներու երկար ցանկ մը զրկեր է եւ Ռուսական դեսպանին միջոցաւ պատասխան ստացեր է որով իրեն կը հաւատուի Չարին Հո' գածութիւնը և Համակրանքը Հայկ. Ե' կեղեցիին վրայ: Եւ այնպիսի գանգատագիր մ'ալ Ռուսիոյ Ս. Մինոզին զրկեց և անոր պատասխանին կապաէ:

Իտալիոյ դեսպանն ալ Սուլթանին սեղանին վրայ նետեր է 100,000 տուրքի պահանջի նոթ մը (Պիլ) ի հատուցում Հայկ. կոտորածներու ատեն Իտալական Հպատակներու կրած կորուստներուն:

ԱՀՈՒԼԻ ԶՐԻՆՉ

Գտնատար Օթմալ և Հըր քաղաքները մէկանց Հրեհ հատեր են, կրակը տարածուէր է 5 քառակուսի մղոն. 3000 ի չափ տուներ այրուեր են և \$2000000 ի կը հասնի կորուստը, կրակը տեւեր է 24 ժամ. Հըր Գաղաքը ամբողջ մոխրակոյտներու վերածուած է: Չխորհուի թէ այդ Հրեհը արկածի արդիւնք է, որովհետեւ կրակը սկսեր է նոյն ատեն վեց տարբեր տեղերէ. կըսուի թէ Պոլսէրներու կողմանէ ձգուած է. վրէժ լուծելու Գտնատան Թրանսլաւալի պատերազմին գաղող զինուորներէն, որոնք այնքան յայտնի քաղաքործութիւններ ըրին:

ՌՈՒՍԻԱ

Լծնած թոյմզի Օտեսայի թղթակիցը կը հեռագրէ թէ. Ռուսիոյ զինուորական գործակալները կողմասի և Հարաւային Ռուսիոյ երկաթուղիներու ընկերութեանց հետ վերջին շարաքներու որոշ կարգադրութիւններ ըրած են որ ի պահանջը Հարկին որչափ զօրք, ուղարկութեք եւ ուսեստ որ Հարկ ըլլայ փոխադրել անմիջապէս պատրաստ գտնուին:

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պօէրները կրկին ի փոխուստ կերթան, իրենց պաշարած տղերը թողուցեր են ծախնակութեան հասնող Անգ-

Լիական զորաց առջեւէն. ու հիմա իրենք պաշարուելու և անձնատուր ըլլալու վերանգին մէջ են. քանի մը կողմերէ Անգլիական ձիաւոր զօրքեր ու թնթանօթած ձիաւոր կը հետապնդեն Պօլսոններուն:

Մեքսիկայի ալ նոր օգնութեան կերթայ և այս անգամ կը յուսացուի թէ պիտի յաջողին ազատել այդ քաղաքը որ ամիսներէ ի վեր Պօլսոններէն պաշտարուած դիւցազնական մարտնչու մեքսիկայի ինքզինքը պահած է. սակայն ուստեսի չգոյութիւնը ալ ատանելի վիճակին հասած է, ու եթէ նպաստ չհասնի, անօթութենէ պարտաւորուած անձնատուր պիտի ըլլան:

Թիւրքիս

Իսմայիլ պէյ, որ շատ նշանաւոր Անգլիանէր մի էր. և որ Տրիպոլի կառավարչի անուան տակ Սուլթանին կողմանէ կ'աջակցէր, Պոլսոնէն աներեւութացրէ. որուն այնքան կարեւորութիւն կը տրուի որքան տրուած էր Մահմուտ պէյին:

ՄուրաՏ պէյ Պոլսն վերադին փախեր է. Հանրածանօթ հրապարակաբար չորս տարի առաջ արտասահման անցնելով Երիտասարդ թիւրքի վարիչներէն մին եղած էր, բայց բարենորոգումներուն դարձաբարութեանը համար սուլթանէն տրուած խոստումներուն բրայ Պոլս վերադարձած էր և պետական խորհրդին անդամ նշանակուած էր: Ապրիլ 8 ին ՄուրաՏ պէյ պաշտօնակիցներուն կը պէտք ընդհանր խոստումները կատարած չըլլալով ինքն ալ պաշտօնէն կը հրաժարի: Ու այս յայտարարութենէն ան միջոցապէս յետոյ կաներեւութանայ: Ոստիկանութեան փնտնութիւնները ապարդիւն մնացեր են:

Պօստոն Փօսթ Ապրիլ 24 թուով կըսէ թէ Մէտիսը քաղաքը (Մէյն նահանգին մէջ) ձէյթը պ ձանսըն անուն հայ մը ձեր բնակարանէ է. երբ գողութիւն արարեցին Պօստոն զրկելու համար կայարանը դաշտեր էր: Որուն սենեակն ալ կը խուզարկուի և հոն ալ 2000 փառուտի չափ երկաթ, պղինձ ու կապար կը գտնուի, որոնք իր գործած գործարանէն կրեր տարեր է:



Ն Պ Ս Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ  
Մ Ե Ն Ս Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ  
Ս ՝ Տ Ա Մ Պ Ո Ւ Ր Ա Ճ Ա Ռ  
Ն Ի Ե Ն Ր Ե 509 2 Ր Է Ա Վ Ի Ն Օ

Տեղական և Արևելեան բազմատեսակ նպտրեղեններ, լաւագոյն տեսակ ընդեղեններ, եղանակին համեմատ բանկարեղեններ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիրփառուները 13 սէնթ մեծաքանակ գնողաց 11 սէնթ. Ուստրի պատուական Պլուր և Մեծած փառուները 3 սէնթ մեծաքանակ գնողաց համար 2 1/2, 2 թիթապտուղ (գէյթու) փառուները 20 ս: մեծաքանակ գնողաց մասնաւոր գեղջ կընեմ, 5 փառուներ քէն սալսայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, աղը դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանտնջ գէյթու: Ձէյթու եղալի (ընտիր տեսակէն) մաքառանի լօբու մտեսակներովը, սպա աղացած կամ չաղցուած, սուսախ, սիսեռ Պօլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքարի տեսակներով, քիմիոն, անասն պատտուական խուրի. աղւոր լիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով եղած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով: Վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ:

Ա Չ Դ  
Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ Պոսթոնի թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԵՆԵՐ ՉԱՓԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ:  
Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով:  
ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
ԱՐԱՄ ՍՍՔԱՆԱՉ  
Մեր Հասցէն է  
Tyler Grocery Co.  
113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ  
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիկին Բաֆֆիլիստ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուներէ ալ գրքեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ գրատէր Հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ բերել տալու պատրաստ են: Քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը: Փափաքողաց գրացուցակ կը շարունակենք մեծ քանակութեամբ գրեանքներու մասնաւոր գեղջ կընենք:  
Դիմել Ո՝ ՊԵՏԻՇԵԱՆ  
390 P. O. Box  
LOWELL MASS

ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՓԱՉԵԱՆ  
NEW YORK  
LIFE INSURANCE CO.,  
ՆԻԵՆՈՐԿ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գործակալութիւնը ըստանձնած է, և անձամբ կամ նամակաւ իրեն դիմողները կապահովագրէ ճիշդ և ուղիղ պայմաններով:  
Նիւ Եորք կենաց պաշտօնագրական Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ միջոցապէս պաշտօնագրական Ընկերութիւնն է, 82 Կառավարութենէ ձանջցուած և անոնց Օրէնքներով վաւերացուած: Այս նիւթին վրայ պատրաստած եմ համառոտ տեղաբաժ մը զոր կը զրկեմ ամեն անոնց, որոնք կը շահագրգռուին այս խնդրով և կը փափաքին որոշ տեղեկութիւններ ստանալ:  
G. H. Papazian,  
15 Temple Place,  
Boston, Mass.

ԱՌ ՉԵՆՆԻ ԲԱՌԱՐԱՆ  
ԲԱՌԱՐԱՆ  
ԱՆԳՒԼԻԲԵՆԷ ՀԱՅԵՐԷՆ  
Գարունը նոր կենաց կը բերէ բնագոյն, Մ. Չապիկը նոր կենաց կը բերէ բարոյագէտ. Սոյն Բառարանն ալ նոր լեզու մը կը բերէ ձեր սուրն իրապէս գինքն է \$ 2,50:  
Ձատկի առթիւ պիտի գրկենք արտաքոյ կարգի գեղջով մը, այն \$ 1,75 ի առթիւն օգտուելու ուղղով թող հաճի զիմեւ առ Պ. Ռ. Թորոսեան  
564 Clinton Avenue,  
West Hoboken, N. J.

Գործի Լաւ Պատեհութիւն մը  
Կուգամ յայտարարել յարգոյ Հայրենակցաց թէ Փրովիտէնս 304 Տեն Ըսթր. Սափրիչի խանութս կուգեմ ծախել ուրովհետև ուրիշ խանութ մը բացած եմ և չեմ կրնար երկու խանութ բանն ունել: Այս խանութը 12 տարիներէ ի վեր Սափրիչի խանութ եղած է և կը վստահացնեմ սր գործը գիտցող սափրիչ մը ծախել շարժական 12 Տօլար շահել. ծախել ողիպուած ըլլալով գինը շատ աթան պիտի ընեմ: Մանրամասնութեանց համար գիմեցէք առ:  
Պետրոս Պըչազճեան  
724 Վէյթ-Միլիթր ֓րովիտէնս


ԿԱՐՈՐ ԱՉԴ  
Ճաշակի յարգող պատուական ապուխտ (Նոյսէրի Պատրոնայ) կը պատրաստեմ, գինն է՝ փառուներ 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին:  
Տ. ՍԷՄԵՐՃԵԱՆ  
113 TYLER ST BOSTON MASS

ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՆՈՒՐԵՆԷ  
Դիմեցէ՛ք Առ՝  
Սարգիս Գ. Սարաֆեան  
1060 Փ. Օ. Պօքս, Ուստր, Մաս.  
Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բոլոր քաղաքները: Կեդրոնատեղին է Նարբերդ, Տեղի Յովհաննէս Նարբուղեան, որ երկար տարիներու գործունէութեամբ և վարկով հանրածանօթ է և Կ. Պօլսոյ Տ. Գէորգ Նարբուղեան: Մեր Գործակալներն են. Մալաթեա Սարգիս Պօնուգլեան. Չմշկածակ՝ Մէյրկէյր Ինճէյեան. Բալու՝ Գարեգին Քիւրէճեան. Չնքուշ՝ Յակոբ Տաղտիկէլեան: Թիւրքիոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ գրամ կը փոխադրենք Նարբերդի միջոցաւ:  
Մարտէյլ թէ Հեռագրով և թէ նամակով դրամ կը փոխադրենք և նաև յին տոմսակներ կուտանք:  
Ուստրի մէջ կը վաճառենք պամես սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ Տաճկական ապրանքներ:  
Նանութիս Հասցէն է՝ 143 Արշ Սթ. Ուստր. Մաս.  
ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ. — Մեզ գրամ ղըրկելու է Մընի Օրտորով, կամ Պանքայի չէքով:

ԴՐԱՄ ԿԸ ՓՈՆՈՒՐԵՆԷ  
Ամերիկայեան Հայ գաղթականութեան կուգամ յայտարարել որ Հայրենիք դրամ փոխադրելու դիւրութիւն ընծայելու համար, փոխադրի նոր գործով սկսած եմ ի Պօսթով շատ մը բարեկաններու ու ծանօթ Հայրենակիցներու թախանձանց գոյացում տալու. աւելորդ է ոչինչ գովեստներ ընել Նարբերդի ինչպէս նաև Տիւրքիական միջոցով Հաստատուած Պէրպլեան երթող տան վարկին ու վստայութեան նկատմամբ. ինչ որ արդէն երկար տարիներէ ի վեր կը վայելեն, պէտք եղած վստահութիւնն ու վարկը գործի հրապարակի վրայ: Գործը պիտի հաստատէ ու վըկայէ զայն, և այս համարձակութեամբ կերպշխարիմ ամէն անոնց, որք կուգեն Փ. Գրի գործին ձ հետ: Օսմ. Լ. \$ 4,50 էն կուտանք:  
Մասնաւոր գործակատարներն ենք Նարբերդ, Մալաթիա, Տիւրքանալիք, Սերաստիա, Հալէպ, Կ. Պօլսոյ և Մարսիլիա ինչպէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մարսիլիայէն երկրներու դրամի և այլ պէտքերու մասին խնամք և դիւրութեան միջոցներ կընձեռենք: Հայաշատ քաղաքներու դիւրութիւն ընծայելու համար երկու գործակալներ կը նշանակեմ որոնց կրնան զիմեւ. — Ուստր. Պ. Գրիգոր Մարգարեան. 157 Սըմըր Սթ. Նիւ Եորքի և Նիւ Ճըրլիի Պ. Մարտիրոս Թաշճեան 251 Ուիլքոմ Սթ. Նիւ Եորք  
Ինձ նամակ և դրամ դրկողներ պէտք է հետեւեալ Հասցէով թղթակցին՝  
P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ տեսնելու ուղղուներ կրնան գիմեւ՝  
344 Cambridge St.,  
Boston, Mass.  
ՅՈՎ Հ. Մ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

Ա Չ Դ  
Այս երկէն մեկնելու նպատակով երեք տարիներէ ի վեր հաստատած կօշիկի խանութս կը ծախեմ ամէն տեսակ նոր կօշիկ կը ծախուի և հիւներ կը նորոգուին ազատ գործ ընել փափաքողներուն լաւ պատեհութիւն է որ տատանան յաջող գործ ընելին կրնայ Հասկցուիլ անոնցմէ որք յաճախ այցելած մեր խանութը. արհեստ չգիտցողներու կը սորեցնես ապարդ ռենցող և ապահով գործ:  
Դիմել  
Ա. Մ. ԺԱՄԿՈՉԵԱՆ  
623 Հարիսի Ա. Վիլլո  
Պոստոն Մաս.

Ա. Ա. Հ. Տ  
Հանգէս Աղապան, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրք. ասարուայ Բաժանորդագրութիւնը:  
Հասցէ  
ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ  
6 ԲԼԷՍ ՏԵ ԼՕՏԻՕՆ Բարիդ



ՍԱՐԱՆԱՄԵՆ ԵՂԱՐԻԲ  
Օղիւ և Մասիլիայի Պատրաստողներ Արևելեան օղիւ և Մասիլիայի անդրանիկ և միակ գործարանը ունինք Մ. Նահանգաց կառավարութեան վաւերացրեցին:  
Միայն պատուական խաղողէ և չաւ միջէ կը պատրաստենք: Մի խմէք օտար և անխորթ խմելիքներ, որ չքանտուրիք: Նմանցէք Հայրենիքի զուտ օղին և մասութեան, որ խնամքով կը մատակարարենք:  
Եթէ որ և է Հայ մը մասնաւոր Հայ բժիշկներ կրնան վաւերացնել ամենափոքրիկ խաղողախմելի մը մեր րմպելեայ միջ, պատրաստ ենք իրենց փորձութեան համար բոլոր ծախքեր և 500 տոլար ալ գրուած վճարել:  
Ուստրիներ կրնան ստանալ օղի և մասիլիա 111 Summer St. ի ըմպելեաց մեծ վաճառատունէն:  
Ուրիշ քաղաքաց Հայեր կրնան զիմեւ կամ գրել ուղղակի մեր գաւարանը:  
Abraham Bro's  
20-22-24 Back St.  
Providence R. I

Ա Չ Դ  
ԸՆՏԻՐ ՊՈՒՂՈՒՐ  
Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուրջուրի գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուրջուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններով, տանտիրիներու և ճարտարագիտութեան քանահատուկ հոն արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորիկաւ:  
Ուստրի ամեն ով որ կուգէ ընտիր և տարածահամ կերակուր լինելու պուրջուրի ծեծած ունենալ, թող գիմէ ուղղակի մեզ: Այսպիսով քիչ քիչ փոքր և կատարուին: Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Հետեւեալ Հասցէին:  
Ուստր, Պուրջուրի Միացեալ Ընկ. 151 Ինիլիս սթ., Ուսթր Մասս:  
Տաճկացի տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք:

ՄԱՐՈՒՆ ԳԻՆՕ  
ՀԱՅ  
Վաճառանոց տնական ամեն կարգի կազ կարտանց:  
Հայերը սակէ պատշաճագոյն տեղ չեն կրնար գտնել զնեկու, մաճակալ, մեթրէս, սեղան, շեռոց, կարպետ և որի կարգին:  
Հասցէն է՝  
MARTIN KEENOW  
79 Green St. : Albany N. Y.

ԳՈՐԾԻ ՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ  
Ամերիկեան Կրօնքի և Պըչըր շախի խանութս կը ծախեմ, ուրիշ երկիր մեկ նելու պատճառաւ, որպէսզի գնելու ուղղը գործին վրայ ճիշդ և ճիշդ գաղափար կազմէ, շարաթ մը իրեն պատեհութիւն կը տրուի խանութին մէջ կենանու և ամէն բանը հասկնալու որ ամեն անձամբ պիտի իմանայ գործին ինչ շահաւոր ըլլալը:  
194 Պընքիլ ըսթրիտ  
Չարլըսթաուն  
Օհան Այվազեան